

ՏԱՆՈՒԷ

ԱՍՏՈՒԱՄԱՅԻՆ ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ

(Շար. տես էջ 470)

ԵՐՐՈՐԴ ԵՐԳ

ԴՈՌՈՒՆ ԴՈՒՈՐ, ՎԱՏԵՐՈՒՆ ԳԱԻԹԸ

ԵՒ ԱՅԵՐՈՒՆ ԱՆՅԱՐԸ

ԲՆ Ծ Մ Է՝¹ կ'երթըցոյի ցաւերոս քաղաքն,
ինծմէ կ'երթըցոյի անանց տանջանքներն,
ինծմէ կ'երթըցոյի կորսւածներուն.

Արդարոտքին² վեհ Հաստիլոս դրոյնց,
Չիս աստուածեղեն բազմակն ըստեղծեց,
վեհ իմաստութիւնն և առաջին սերն.
Ինծմէ յառաջ լոկ յաշիթ արարածը³
Էացան, և ես կը տեսնեմ յաշիթ
Թողեք ամէն յոյս դռնք որ կը մըտնեք:

1. Ինծմէ. դռն և խօսողը: — Քաղաք.
դժուրն ընդհանրապէս, և առանձնակի՝ դժուր-
քին ստորնագոյն մասը:

2. Արդարոտքին. կը նկարագրէ ամենասուրբ
երրորդութիւնը: Չորտքիւն (potestate զոր մեծք
բազմակ (թարգմանեցինք), և Աստուած Հայր,
Իմաստութիւնը՝ և Բանն կամ Որդին, սերը՝
Սուրբ Հոգին: Հմտ. Ս. Թովմ. Բով. Աստ-
Ման Ա. խնդիր ՄԵ. յօդուած 6:

3. Արարածներ. Դժուրքը ստատմաներուն
համար ստեղծուեցաւ. Հմտ. Մատթ. ԻԵ. 41,
երբ Արուսեակն ինկաւ երկնքէն. Հմտ. Դժուրք
ԼԻ, 121, և այլն, մարդուս ստեղծումէն առաջ
Դժուրքէն առաջ ուրիշ յաւիտենական իրեր ալ
ստեղծուեցան. երկինքը, հրեշտակները, եր-
կիրս՝ ըստ նիւթին. իսկ ապականացու իրերը
զոր օրինակ երկրիս ձեւը, մուրակները, անա-
սունները, մարդիկ, և այլն, յետոյ ստեղծուեցան:
4. Գրուած. որմէ: Իր գէպի ղ ղժուրք ուղե-
ւորութեան միջոց՝ գեւերը կը ջանան միշտ
դիւրեք ետ դարձնել. ուստի կրնաք հետեւ-
ցընել որ նոյն իսկ դեւերը գրած ըլլան այս
բառերը, որոնք յերաւի դիւական Հմարտու-

Այս խօսքերը ես մըթադին գոյնով
Գրուած⁴ տեսնելով գրուան մը վերեւ,
«Վարժապետ, անոնց իմաստն ինձ խիտ է»,
Լսի. և նա ինձ գերդ խոհական ոք.
«Հոս պէտք է թողուլ ամէն տարակոյս,
Ամէն վատութիւն պէտք է մեռնի Հոս.
Եկանք հասանք Հոն ուր ինչպէս ըսի՝
Պիտի տեսնես դուն ցաւագին մարդիկ
Որ մըտաց բարին՝ կորսնցուցած են»:
Եւ ապա ձեռքը ձեռքիս մէջ դնելով,
Ջրաբթ դէմքով մը՝ որ ինձ սիրտ տըւաւ,
Անդունդին գաղտնեաց մէջը դիս մըտուց:
Հոն հառաչք ու լաց ու բարձրը ճիշեր
Կը թընդացնէին օդն աստեղազուրկ,
Որ ինձ ըսկըզբան արտասուել տըւին:
Չանապան լեզուք, քրմնեղի բարբառք,
Վըշտի մըռունչներ, ցատոյթի շշուար
Սուր ու կերկեր ձայնք և ձեռաց շաշխնք
Խռովախուժ աղմուկ մ՝ հանէին որ յար
Այն մըշտագիշեր օդին մէջ պտուտքի
Ինչպէս որ աւազը մըրըկին առջեւ:
Եւ ես՝ որ ստկուռն⁵ էր գլուխըս պատեր,
Լսի. «Վարժապետ, այս Բն կը լըսեմ,
Ո՞վ են այդ ցաւէն ընկճուած մարդիկ.
Եւ նա ինձ. «Այս խեղճ վիճակին մէջ են
Թըշուառ ու տըրուր Հոգիներն անոնց
Որոնք ապրեցան անպարտաւ⁶ ու անգով:

Թիւն մը կը բովանդակեն: Գէթ Տանդէի հա-
մար, նոյնպէս և այն շատերուն Պժ. Կ. 61,
բողեք անէն յոյսը ամենեւին ստուգ չէ:

5. Լսի. երգ Ա. 114, և այլն:

6. Բարիք. Աստուծոյ ծանօթութիւնը և դէմ
յանդէման տեսութիւնը:

7. Աստեղազուրկ. բարձր դժուրքին մէջ աստղ
չի տեսնուիր. Հմտ. Պժ. ԼԻ. 159, հոս մաս-
նաւոր կերպով յիշուած է վասն զի մարդոց
այս տեսակը (հեղա, թշու, վատ, անպարծ) չի
նայիր յաստեղծու, չունի ոչ մի դադափարա-
կան, ոչ կրօնական, ոչ բարոյական և ոչ քա-
ղաքական:

8. Մոսիսով. այն սարսափելի միտքին և
մըթադին գոյնով գրուած յատերուն համար:
Վերգիրիւն այս տողն է. Սեր նախ տակաւնին
դրժուրակ պատեաց գիւնէ. Էնիակ. Բ. 557.
ոմանք error կը կարգան, բայց սխալ է, ու-
ղեղն է error:

9. Անպարտաւ. առանց գործելու դրժուրք՝ որ
գիրենք վատահամբաւ, անուանարկ ընեն, և
ոչ ալ գործեր՝ որ գիրենք զովասանաց արժա-
նացընեն:

Խառնուած են այն վատթար դատուն հետ
 Զէզոր¹⁰ Հրեշտակաց, որոնք Աստուծոյ
 Ոչ Հնազանդեցան, ոչ ալ Հետեցին:
 Երկինք իր գեղոյն բիծերը մերժեց¹¹,
 Զ'ընդունիր զիրենք դժուարին անդունդն ալ,
 Գուցէ՝ յանցաւորք պարծին¹² անոնցմով »:
 Եւ ես. « Վարժապետ, Բնէ դժբերդակ ցաւ
 Ուրեմն անոնց այնքան ճշլալ կու տայ »:
 Պատասխան տրուաւ. « Կարճ պիտի կապեմ:
 Մեռնելու բնաւ յոյս չունիմ¹³ ասոնք:
 Եւ իրենց կոյր¹⁴ կեանքն այնքան է անարգ,
 Որ այլ ամէն¹⁵ կեանք նախանձնին չարժէ »:

10 Զէզոր. կը համարի որ երբ Արուսեակը
 բազմամարման Աստուծոյ դէմ, մի քանի հրեշ-
 տակներ չէզոք մնացած ըլլան, ուղիւով տես-
 նել կուտին էլքը: ու այնպէս որոշել ընդիւ-
 նին: Այսպիսի գաղափար մը յայտնած է եր-
 րորդ դարուն մէջ Կրիմէս Աղեքսանդրացի.
 Յաւանք. 7: Զի զիտցուի թէ Բնէ աղբիւրէն ա-
 ւած է զայն Տանիւք:

11 Մերժեց. Երկինք զանոնք մերժեց միան-
 գամ ընդ միշտ. « Եւ անկաւ վիշտայն մեծ...
 և հրեշտակք նորա ընդ նմա տակն »: Յայտ-
 ԺԻ. 9: Բայց խոր դժուար զիրենց կը մերժէ
 շարունակ, վասն զի ուրիշ ամէն վիճակին նա-
 խանձարը ըլլալով՝ հոգի վարը պիտի երթային
 երէ իրենց բնամայուէր:

12 Պարծին. այս սոգին բնագրին է. « Chò
 aleuna gloria i rei avrebber d'elli ». Aleuna
 անորոշ ծանկանք՝ Տանդէի մեկնիչներուն խուժ-
 րը՝ երկուքի բաժնած է. ոմանք կը հասկընան՝
 չաստատական իմաստով, որ կը նշանակէ իմն,
 ինչ, մը, ոմանք ալ Բացատական՝ ոչ մի. ինչ,
 և այլն. բայց Տանդէի գործոց մէջ aleuno ոչ
 երբեք ունի կամ nessuno (ոչ ոք, ոչ մի) ի-
 մաստով գործածուած է. որով ճշգրտօրէն Հաւա-
 տատական իմաստով թարգմանել, ինչպէս որ
 բրիւքն որ: Դարձեալ երբ խոր դժուարը զա-
 նոնք չ'ընդունիր, պատճառն է՝ որպէս իր այն
 դեւերը որ հոն դժուարին խորն են, արտի այս
 զոհակները չունենան՝ տեսնելու մի և նոյն
 սեղը և հաւատար պատժով դատապարտուած
 զանոնք՝ որոնք չմեղանկեցին իրենց պէս: Բաց-
 ատական հակաընդունին ալ չ'ըսեն, որ խոր
 դժուարը յանցաւորքն ալ չեն ընդունիր զա-
 նոնք իրենց մէջ, իբրեւ թէ անոնց ներկայու-
 թիւնը իրենց նուատուութիւն ըլլար:

13 Զնախն. անդիտ աշխարհք գազդոյներէն
 ոչ որ չունի այդ յոյսը. բայց ասոնք ուրախու-
 թեամբ պիտի յափշտակեն: Գիտնալով իրենց
 բացարձակ ոչնչութիւնը, մեծ միտնաբերութիւն
 մը պիտի ըլլար այս ծայրերուն և վատերուն
 համար, երբէ կարենային յուսալ՝ որ մը ոչնչա-
 նալու է:

14 Կոյր. մութ. վասն զի կը գտնուին ան-
 աստղ օդի մը մէջ:

Զունին յիշատակ մ' իսկ աշխարհի մէջ,
 Մերժուած գթութենէ¹⁶ ու արդարութենէ.
 Վրանին չըլտօսիւք, նայէ ու անցիր »:
 Եւ նայած պահուս՝ դրօշակ մը տեսայ,
 Որ այնքան արագ վազէր դառնալով՝
 Որ կարծես բռնաւ կենալիք չունէր:
 Կու գար ետեւէն գունդ մը մարդեբոււ,
 Գունդ մ' այնչափ երկայն՝ որ տի չհաստայի
 Թէ մահը այնքան մարդ լափած ըլլայ:
 Գրտնեղով անոնց մէջ ինձ ծանօթներ,
 Նայեցայ ճանչցայ ըստուերը անոր¹⁷
 Որ մեծ հրաժարումն ըրաւ վատութեամբ:

13. Այլ ամեն. կը նախանձնի ուրեմն նոյն
 իսկ խոր դժուարը եղզոյնբուռն վիճակին. կ'ու-
 ղեն հոն երթալ, բայց ան զիրենց ընդունիլը:

16 Գործարիւն. վասն զի չ'ընդունիր զանոնք
 ոչ Արքայութիւնը և ոչ Քաւարանը, և ոչ իսկ
 ստորին դժուարը: Յօժարակամ պիտի երթային
 հոն, բայց կը մերժէ:

17. Անոր. շատերը կը կարծեն որ Կեդեա-
 տինն Ե պապն ըլլայ: Նիկիոյայոս Դ պապին
 մահուանէն ետքը, որ տեղի ունեցաւ և ապրիլ
 1292, յետ երկու տարի ամօտը պարսպ մնա-
 լաւ, վերջուպէս ընտրուեցաւ, 1296ի յուլիսի
 3ին, Պետրոս Մարտինան անապատաւորը որ
 կոչուեցաւ Կեդեատինն Ե. բայց արդէն 79
 կարեանք ծերունի մ'ըլլալով, անվարժ աշ-
 խարհի և խանդակաթ իր անապատին՝ հոն քա-
 շուեցաւ, քահանայապետութենէն հրաժարելով
 հինգ ամիս ետքը, 13 անգամեմբ 1296ի: Ոմանք
 կ'ըսեն՝ որ իր յաջորդը Կեդեատինն Ը ստի-
 պած ըլլայ հրաժարելու: — Այլը կ'ը համարին
 Դիոկղետիանոս՝ որ ծերութեան ատեն հրաժա-
 րեցաւ կայսրութենէն: Պաքսէնիոյ կը խոստա-
 վանի. « Ստոյգ չի գիտցուիր թէ որո՞ւ համար
 կ'ըսէ »: Ուրիշ հեղինակաւոր մեկնիչ մ'ալ՝
 երկայն զովեաւ մ'ընելով Կեդեատինն Ե. պա-
 պին վրայ՝ կը կուտի հասարակաց և առավկին
 կարծեաց զեմ, դնելով զայն մարտիրն այն սնո-
 տի խօսքերուն կարգը, որոնք լուսելու տը-
 փանի չեն, և ինքը ետեւը կ'իմանայ՝ որ քանի
 մը ուղղով անդրանկութիւնը Յակոբին ծախեց.
 Հմմտ. Միտանդի ին, 29, և այլն: Տանդէի ը-
 սածէն այն կ'իմանալ, որ այնպիսի անձի մը
 վրայ կը խօսի, զոր տեսած ու ճանչցած ըլլայ
 այս կենաց մէջ, մինչդեռ հաւանական չի թուիր
 որ Տանդէ տեսած ու ճանչցած ըլլայ անձնա-
 պէս Կեդեատինն Ե. Ը: Բայց ինչ որ ալ կար-
 ծիք ունենայ Տանդէ Կեդեատինն հրաժար-
 ման վրայ, ոչ մի կերպով կարելի չէ հաւանել,
 որ Տանդէ զանկաւ յիշատակած ըլլայ վատաց
 խմբին զլիսաբանութիւն մէջ, որոնք հասնի չեն
 ոչ Աստուծոյ և ոչ ալ իր քննականաց: Ուրիշներ
 ուրիշ անձեր կը կարծեն. բայց ինչ որ ալ ըսեն
 կամ ընեն, չատ անտեսել քան մին չի որոն
 պարզապէս զուշակութիւն անունը կրնանք

իմացայ փութով և Հաստատուեցայ
Որ վատաց էր այն ամբողջ, որը Հանոյ
Զնն ոչ Աստուծոյ, ոչ իր Թընամեաց¹⁸ :
Այս չլուռը որ բնաւ կենդանի չեղան¹⁹,
Մերկանգամ էին, զորս Հոն գրտնրուող
Պիտակներն ու մեծ ճանճեր խայթելով
Կը լուային անոնց դէմքերն արիւնտով,
Զոր, արցունքով խառն, իրենց ոտից մօտ
Կը ժըծէր գեռուն որդանց պիղծ ջուրի :
Եւ երբոր նորէն նայեցայ Հեռան,
Մեծ գետի²⁰ մ' փփունքը տեսայ մարդիկ .
« Վարժապետ, ըսի, այն ատեն, խընդրեմ
Զրուցէ ինձ ո՞վ են, զորս աղօտ լուսով
Կ'որոշեմ ասկից, ի՞նչ օրէնք այդքան
Կը շտապեցընէ զանոնք անցնելու » :
Եւ նա ինձ . « Բոլոր քեզ պիտի պարզուին
Երբոր մեր ոտից քայլեր կանգ առնուն
Մօտ Ախրոնեան տըխուր վըտակին²¹ » :
Յայնժամ ամբողջօտ աշերս վար առած՝
Մի գուցէ խօսիլն տաղտուկ պատճառէ՝
Լուռ կեցայ մինչեւ որ գետը Հասանք :
Եւ ահա կու գար նաւով դէպ ի մեզ
Երբ մը²² ճերմկեցած, ծաղկած մազերով,
Գոչելով . « Վայ ձեզ, վատթար Հոգիներ :

Երկինքը տեսնել երբեք մի յուսաք,
Կու գամ միւս փփունքը տանիլ ըզձեզ,
Անանց խաւարին, տաքին, ցուրտին մէջ :
Եւ դու, կենդանի²³ Հոգի, որ Հոգ ես,
Հեռացիր, զատուէ՛ այդ մեռածներէն²⁴ » :
Բայց երբոր տեսաւ որ չեմ Հեռանար
Ըսաւ . « Ո՛ր ասկէ, այլ ուրիշ ճամբէ²⁵
Ու նաւահագրուէ պէտք է անցնիս դուն .
Քեզ թեթեւագոյն նաւ մ' Հարկ է տանի » :
Առայնորդ տանր . « Քարոն, մի ցատնուր,
Այսպէս կ'ուզուի Հոն՝ ուր որ կ'ըլլուի
Ինչ որ ալ ուզուի, ալ բան մի Հոգեցնի » :
Ասոր վրայ բըրդոտ այտերն Հանգչեցան
Կապուտակ ճաշին ծեր նաւավարին,
Որ ունէր աշաց շուրջն անիւներ բոց :
Բայց այն խոշտանգուած²⁶ ու մերկ Հոգիներ,
Գոյներնին նետած²⁷ աղօտ կըրնտեցին,
Հազիւ իմացան այն անգուլի խօսքերն :
Կը Հայկոյնէն զԱստուած²⁸ ու ծնողքներն,
Մարդկային ազգ, տեղ, ժամանակ ու սերմ
Իրենց ժընընդեան ու իրենց զարմին :
Յետոյ խըմբեցան²⁹ ամէնքը մէկ տեղ՝
Դառնապէս լալով՝ դըժնէ փփին վրայ,
Որ Աստուծմէ վախ չունողին սպասէ³⁰ :

տալ : Քանի որ Տանդէն լսեր է անձին անուներ,
պէտք ենք խոստովանել թէ չենք ճանչնար :

18. Իր քղնամեաց . սատանաներուն : Վա-
տերը անարգուած են, ոչ միայն բարիներէն,
այլ նաեւ չարերէն :

19. Կենդանի չեղան . այսինքն թէ երբեք
կենդանի մարդու կործ չզոքեցին, զործով
չյայտանցին թէ կենդանի են :

20. Փետր . Ախրոն, կամ ցառց գետ, որմէ
անցնելով Հոգիք, ըստ Հին դատական Հեղինա-
կաց՝ դէպ ի դոխոսց տանջանքները կ'երթան .
Հմմտ . Վիրդ . Էնիակ . Ե. 99. 2. 107, 295. Է.
91. 512. 716. Թ. 23 :

21. Ախրոնեան փտակ . Ախրոն գետը . Հմմտ .
Հով . Որ . Ժ. 513. Վիրդ . Էնիակ . Զ. 295 :

22. Երբ մը . Քարոն . նմանութիւն Վիրդի-
ւեայ նկարագրածին . Էնիակ . Զ. 298, և այլն :

23. Կենդանի . Կրկին իմաստով . գետ մարմինն
չբաժնուած, և չդատապարտուած . Հմմտ . տ.
127, և այլն :

24. Մեռած . լուծուած մարմինն և դատա-
պարտուած :

25. Ծամրեի . գուցէ Քառ. Բ. երգին ճամբան
ու թեմէն նաւը կ'անկարկէ :

26. Խոշտանգուած . մարմնէն նոր բաժնուած
ըլլալուն Համար . — Մերկ . ինչպէս զգեստէ,
նոյնպէս ամէն սգնուածն... աստուածային
չնորհէ :

27. Գոյներնին նետած . օշային մարմիննե-
րը՝ ունին նիւթական մարմնոյն ոչ միայն ձեւը,
այլ նաեւ գոյնը . Հմմտ . Քառ. Գ. 51, և այլն .
Ին. 79-107 :

28. ԶԱստուած . զպրօցական վարդապետու-
թեան Համաձայն, թէ դատապարտեալք այն-
չափ աւելի կը նախատեն զԱստուած, որչափ
աւելի Հարուածուած ըլլաւ Անոր Արդարութե-
նէն . Հմմտ . Ս. Թով . Բով . Ստա . Մասն. Բ. Բ.
13, 4 : Գարծաւ կ'անիծեն անոնք նախածնող-
ները, ըսող մարդիկ, տեղը և ժամանակը յո-
րում, և սերմը՝ որմէ սերեցան և ծնան : Գա-
ղափարը առնուած է Յովթայ գրքին . Գ. 3,
և այլն, և Երեմիային Ի. 14, և այլն : Կ'անիծեն
մարդկային ցեղը, վասն զի պիտի ընտրէին ա-
նասուն ըլլալ՝ որուն Հոգին կը մեռնի մարմնոյն
հետ : Պիտի ընտրէին Հուսիք ընաւ ծնած չըլ-
լալ, կամ անբան ծնանի :

29. Խոմբեցան . վասն զի ամէնքը մի և նոյն
ատեն չէին բաժնուած մարմնէն, այլ մէկը ա-
ռաւ, և մէկը վերջը եկած էր . որով Հարկ էր
որ խմբուէին :

30. Սպասէ . Ախրոնի փփը կը սպասէ այն
ամենին՝ որ Աստուծմէ երկինք չուներ : Ով որ
չ'երկնչիր յԱստուծոյ՝ դատապարտուած է, և
ամէն դատապարտուած կը սպասուի այն ա-
փէն :

Իսկ դեւըն Քարոն՝ բարկացայտ աչօք
Ակնարկելով լոկ կը ժողկէ բոլոր
Իշեցընելով թին ուշացողին։
Ինչպէս որ տերեւք աշուն ժամանակ
Կը թափին մէկիկ մէկիկ՝ մինչեւ ճիւղն
Իրեն կողպուտն ի գետին տեսնէ՝ 31.
Սապէս ապիրտս սերմն աղամային
Կը թափի մէկիկ մէկիկ այն փակէն՝ 32
Այնարկով ինչպէս թռուռնայն՝ 33 Եւր հրապոյր։
Այսպէս թուիս ալեաց վրայէն կ'երթան,
Եւ դեռ դիմացի ափը չըհասած,
Առդին ուրիշ նոր գունդ՝ 34 մ'ալ կը խըմբուի։
« Որդեակ իմ, ըսաւ, ազնիւ վարժապետս,
Աստուծոյ ցաման մէջը մեռնողներն
Ամէն գաւառէ հոս կը հաւաքուին.

31. Տեսնէ vede. դրչազրաց մեծամասնու-
թիւնը՝ նոյնպէս բազմաթիւ ապագրութիւններ
այսպէս կը կարգան։ Ուրիշներ կը կարգան ren-
de (մինչեւ որ) տայ, ըմտայն։ Տանդէ մեկնի-
ներէն մին՝ 240 ձեռագրաց մէջ միայն 6 հաս
գտնէ է ronde ընթերցւածով, նոյնպէս ուրիշ
շատ մեկնիներ՝ vede կը կարգան։

32. Աիհն. դէպ ի նաւակի։
33. Ինչպէս քայռն. Հմտ. Վիրգ. Էն. Զ.
309, և այլն — Հրապոյր, գինքն որսալու
համար վարուած ցանց։

34. Եւր գտնող. միջին հաշուով կը մեռնին
երկրիս վրայ ամէն մի վայրկեան 30 հոգի, ու-
րոնք աւելքը սաստիկային իշխանութեան տա-
կը չեն երթար։ Եթէ ուրեմն այդ անցուդարձի
ստեն նոր գտնող մը կը խմբուի, ըսել է որ
այդ երթեւեկը քանի մը վայրկեան մէջ կը կա-
տարուէր։

35. Բարի. Էնկղանի հոգի, սող 88, չդա-
տապարտուած։

39. Լըմցաւ. Վիրգիւիոսի խօսքերը. տ.
121-129։

37 Աշխարհըտաւ. վառն զի չկայ հոն ոչ արեւ
և ոչ աստղ և դարձեալ, խաւարտին՝ մեղաց
միտութենէն։

38. Յնգնացաւ. Հմտ. Մատթ. Իվ. 2։ Դծ.
Թ, 64, և այլն։

39. Ինկայ. հանգչած այլը (Գ. 4) բէշ շատ

Եւ կ'աճապարեն գետէն անցնելու,
Զի արդարութիւնն Աստուծոյ խըթէ,
Այսպէս որ տենչի կը փոխուի երկիւղն։
Ասկից բնաւ բարի՝ 35 հոգի մը չ'անցնիր,
Որով կըրնաս լաւ հասկընալ Թ՝ ինչու
Քարոն չէր ուզեր ընդունիլ ըզբեզ։
Երբ այս լըմընցաւ՝ 36, աղմամբըտս՝ 37 դաշտն
Այնպէս ցընցուեցաւ՝ 38, ոյր յիշատակն իսկ
Զիս դեռ ստուգուած կը քըրտեցընէ։
Արտատուաց երկէն հով մըն է փըրթաւ,
Փայլատակելով լոյս մը կարմրափայլ,
Որ զգայարաններս թըմրեցուց բոլոր։
Եւ քընթաթաթի մարդու պէս ինկայ՝ 39.

136

Շարայարեղի Թրգմ. Հ. Ա. Ա. ՊԱՅԿԻԱՆ

տեւական ըլնէ մը կ'անթարէ։ Տանդէ արթննա-
լով քունէն՝ ինքզինքը Ասեբոնի միւս ափը կը
գտնէ։ Ինչպէս հոն հասաւ. Գրեթէ ասորա-
կան դարձած կարծիք է, որ Հրեշտակ մը տա-
րած ըլլայ, կարծիք՝ զոր հաստատուած կը
կարծեն՝ համանման անցըով Դծ. Թ. 64, և
այլն, ինչպէս նաեւ քաւ. Թ, 42, և այլն,
անցըով։ Բայց առաջինքն մէջ յայտնապէս յի-
շատակուած է հրեշտակը, երկրորդին մէջ կը
պատմուի թէ ինչպէս Լուսիս փերթողը՝ քնա-
ցած ատեն վեր փոխադրեց։ Ինչու այս տեղ ոչ
մի յիշատակութիւն չ'ըլլաւ Էրեշտակի։ Կայ
հով, փայլակ, որտուռ, բայց Հրեշտակի ոչ
մի ստորոգելի։ Յիշուի, սկզբաւ Քարոն չու-
ղեց անցընել զՔերթողը, բայց յետոյ հանդար-
տեցաւ, լսելով Վիրգիւի խօսքերը, և 97-99
տողերը ենթադրել կու տան որ իրաւի զինքն
անցուցած ըլլայ։ Եթէ, յետ ըսելու թէ Գա-
րոն հանդարտեցաւ, ուզած ըլլար Տանդէ ակն-
արկել ասորականէ տարբեր ուրիշ անցը մը՝
կատարուած Հրեշտակի ձեռքով, յիրաւի պէտք
էնէք սպասել երկաշարժէ, հովէ, փայլակի
և Քերթողի թմրութենէն աւելի բանի մը։ Այ-
լաբանաբար, Յովն. Գ. 8. « Զի հոգի՞ն ուր
կամի չնչէ, և զձայն նորա լսես, այլ ոչ դիտես
ուստի զայ կամ յո երթայ. սոյնպէս և ամե-
նայն ծնեալն ի հոգւոյն »։ Քերթողը կը նկա-
րագրէ հոս իւր ի հոգւոյ ծննդեան սկիւրը։

ԱՐԵՒԹՈՒՏՔ

Երեսնից գաշտիմ արոյնամմ
կըտրած կապրտմ ուկիւնմ,
Դէպ իրեմ մայր խոնարհի
չըրածնաւ տայով աշխարհի։

Բայց կամք չուի՞ մի կարծես
թողուլ մըրցմանց ասպարէս,
Կարծես չ'ուզեր որ գիշեր
իր գործն ըմէ կիսաւեր։

Չը տըմտըմայ, կ'ուշամայ
չըրամց քարծանգը վըրայ,
Չըքմալագնդ ծիրարմմ
հոս հոմ սըփուէ կաթոգնմ։

Միղմէ իրիմ հրաթաղամթ
ծամանջմերում բոց, եւամթ,
Կ'ուզէ որ դիւ չըսեկնամ
ձիմըը դիտմմ հիւացմ։

Եւ մերկելով ծիրամի
երկնց ամպոյր գեղամի,
Մեղովի կ'իջնէ դէպ ի մայր-
որ կը սպասէ իրեմ յար։

Բոուիւնմ ամոր ի սըրտէ
բարի համգիտս որ մաղթէ-
որ կը սպասէ ամնամբեր,
Որ զայ փամէ սեւ գիշեր։